ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1.1

«ՀՀ ԱԱԾ-ՏԱԵԿԿԳՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/5-ՍԶ3» ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

16-ը փետրվարի 2026թ.
ժամը 10^{30}

ք. Երևան

Մասնակցում էին՝

նախագահ՝

- ՀՀ ԱԱԾ ՏԱ և ԿԿԳՎ աշխատակից, Ա. Խաչատրյանը,

անդամներ.

- ՀՀ ԱԱԾ ՏԱ և ԿԿԳՎ աշխատակից Պ. Հովհաննիսյան,
- ՀՀ ԱԱԾ ՍԶ աշխատակից Տ. Կոստանյան,

Քարտուղար

- «Փրոմոուշն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ, Վ. Էլոյանը

1. «ՀՀ ԱԱԾ-ՏԱԵԿԿԳՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/5-ՍԶ3» ծածկագրով ընթացակարգի պարզաբանման՝ հարցադրման մասին.

(Ա. Խաչատրյան)

1.1. 13.02.2026թ-ին ժամը 13:51:35-ին Մասնակցի կողմից ստացվել է հարցում (կցվում է) հետևյալ բովանդակությամբ՝

«Հարգելի պատվիրատու, տեղեկացնում ենք, որ վերջի 5-6 ամիսների ընթացքում տեղի են ունեցել և շարունակվում են համակարգիչների բաղադրամասերի կտրուկ աճ, որի պատճառով 1-ին չափաբաժնի համար Ձեր կողմից նախատեսված գնման գինը էապես ցածր է ներկա պահին այդ բնութագրերով համակարգիչների համար անհրաժեշտ գումարից: Ձեր գումարը մեծ դժվարությամբ կբավարարի 180 հատ համակարգիչների համար, եթե նրանց բնութագրերից հանեք 1Tb կոշտ սկավառակը և լիցենզիոն օպերացիոն համակարգը: Իսկ պահանջվող բնութագրերի դեպքում Ձեր գումարը կբավարարի ոչ ավել, քան 120 համակարգչի համար:»:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1.2. Հանձնաժողովը որոշեց պատասխանել հարցում ներկայացրած Մասնակցին (կցվում է) հետևյալ բովանդակությամբ՝

«Հարգելի գործընկեր տվյալ մրցույթի նախահաշվային գները ձևավորվել են նախորդ կայացած մրցույթների շահած գների կամ ընթացքում կատարված գնահարցումների հիման վրա:»:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Ա. Խաչատրյան**

Անդամներ՝ _____ **Պ. Հովհաննիսյան**

_____ **Տ. Կոստանյան**

Քարտուղար՝ _____ **Վ. Էլոյան**